ԿԱՒԿԱՍԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՏՓԽԻՍ ՔԱՂԱՔՆ

(Տես յէջ 82)

ՏՓԽԻՍԻ բնակչաց թիւը, ըստ նորագոյն աշխարհահամարի, 145,736 է, պահպանեալ զորքն ալ մէկտեղ հաշուելով. մինչ 1876 ին 104,025 էր այդ թիւն, որով և տասնուհինգ տարուան միջոց 41,000 բընակչաց աճումն կը տեսնուի։ Արանց և կանանց թուոյն համեմատութիւնն է 56 առ 44. որով 81,000 կ'ըլլան արք և 64,000 կանայք։ Որչափ ալ պաշտօնական գրքերէ առնուած են այս թուանշանք, բայց ճշդութեան չենք կրնար երաշխաւորել, որովհետև բոլորովին ասոյդ աշխարհահամար ի Կաւկաս՝ դեռ մեծամեծ դժուարութեանց ենթակայ է. մանաւանդ որ անհաստատ բնակութիւն ունեցող բազմաթիւ գործաւորք կան ի Տֆխիս։ Քաղաքին ամէն ազգութեանց մէջ թէպէտ արք չատոր են քան զկանայս, բայց համեմատութիւնը մեծ զանազանութիւն ունի. դի աւելի են Ռուսաց և Վրաց մէջ 52 առ 48 և 56 առ 44, և ամենանուազն առ Մինգրէլս և Իմէրէթիս. առաջնոց մէջ 23 են կանայք և Էրիկ մարդիկ 77, և երկրորդաց՝ 19 կանայք և 81 էրիկ մարդիկ։

Նոյն երեւոյթն է ամէն դասակարգի և իւրաքանչիւր կրօնական դաւանութեանց ներկայացուցչաց նկատմամբ, բայց աւելի յայտնի կերպով Տֆխիսաբնակ գիւղականաց մէջ, յորս արք կրկնապատիկ են թուով քան զկանայս. և այս բնորոշ անհամեմատութիւն՝ տարակոյս չկայ որ ամենամեծ ազդեցութիւն ունի բնակչաց ամենաթոյլ բարոյց վրայ։

Ազգայնութեանց տեսակիտով կարգէ դուրս խառնուրդ մը կրնան համարուիլ Տֆխիսու բնակիչք, որոց մեծագոյն մասը բաժնուած է երեք ազգաց. և Հայք են աւելի բազմաթիւն կազմող, որք ըստ այլեւայլ պաշտօնական հաշիւներու՝ ամբողջութեան 36,2% ինչուան 47,7% կ'ենթադրուին. ապա կը յաջորդեն Վրացիք և ուրիշ Կարգուիլեան ցեղեր, 21,4% էն մինչև 25,9%, և յետոյ Ռուսք, Բուլղարք, Չէքք, Սլովաքք՝ մերձաւորապէս 18,2% և 29,7%։ Կը մնան գրեթէ 12 կամ 13% ժողովրդեան, ուրիշ ազգերէ, և որոց մէջ աւելի կարեւոր թիւ ձեւացընողներն են Թաթարք, Գերմանք, Լեհք, Պարսիկք և Հրէայք։ Տֆխիսու բնակչաց այս զանազան ազգութիւններն համեմատելով բոլոր Անդրկաւկասի բնակչաց հետ, կը գտնենք թէ Թաթարք և լեռնական ցեղեր՝ ընդհանրապէս չեն ախորժիր քաղաքաց մէջ բնակութիւն հաստատել, և թէ Հայք և Ռուսք են Կաւկասի գլխաւոր տիրեալ բնակիչք՝ այլեւայլ պատճառներով. առաջիններն՝ իրենց վաճառականական յարմարութեամբ, և երկրորդներն՝ իրենց դիրքովն, իբրու տեարք երկրին, և վարչական զանազան պաշտամանց պատճառաւ։

Թէպէտև հին Վրաստանի մայրաքաղաքն համարուած է Տֆխիս, բայց հոն բնակող Վիրք միշտ սակաւաթիւ եղած են քան զՀայս, և որոյ պատճառ է Վրաց ազատական կառավարութեան կարգաւորութիւնը, քաղաքային կենաց ախորժ չունենալը, և իշխանաց՝ իրենց յատուկ կալուածոց և ընտանեկան հարստութեանց մէջ բնակելու սովորութիւնը, բազմաթիւ հպատակաց քով, միշտ կազմ և պատրաստ իրենց տէրանց ամէն ակնարկին և հրամանաց։

Տֆխիս, ձեռագործարանի քաղաք չէ այլ վաճառականական մեծ կեդրոն մը և բազմաթիւ փոքր ճարտարութեանց աթոռ։ Ոստիկանութեան խնամքով հրատարակուած տեղեկագիրներէն կը տեսնուի, որ վաճառականական և ճարտարութիւններէն եղած գործ-

digitised by A.R.A.R.@

առնութեանց շահագործութիւնը երեսունու. մէկ միլիոն ռուբլի կը ձեւացընէ, կամ տարին ութսուն միլիոն ֆրանկ։

Արուեստագէտքն՝ որ համբաւ կը կոչուին, մասնաւոր դասակարգ մը կը կազմեն, և որ շատ կողմանէ նման է միլին դարուց մէջ յեւրոպա գտնուածներուն. ընկերութիւն մ'է այլեւայլ արուեստից առանձնակուրգ և երկրորդական վարպետներու, որ իրենց մասնաւոր դրօշն ունին և պաշտպան սուրբը, ընտրուած խորհրդականներն և պարտաւորիչ կարգերն ու կանոններն։ Այսպիսի ընկերութիւնք ունին գլխաւոր գործաւորք, գինուոյ վաճառականք, մսավաճառք, ինչպէս նաև ցորենոյ վաճառողք, ջրկիրք, բեռնակիրք, հացագործք, երաժիշտք, որմնադիրք, ատաղձագործք, և այլն։ Իւրաքանչիւրն ունին իրենց գլուխը կամ ուստապաշին և ծերունի խորհրդականները (ագսագալ). առաջինը պահպանող է աւանդական սովորութեանց և պատշաճից ընկերութեան. միանգամայն վճռատու դատաւոր ընկերաց մէջ տեղի ունեցած վիճից կամ անհամաձայնութեանց, և իր օգնականներովը խորհրդեան ժողովը կը կազմէ. և ծերունեաց հետ կը հսկէ ընկերութեան անդամոց ընթացից վրայ, մտիկ կ'ընէ ասնոցմէ միոյն կամ միւսոյն դէմ եղած գանգատներուն, վէճերն ու տարաձայնութիւնները կը լուծէն կամ իր իշխանութեամբ կամ իրաւարարներ կարգելով։ Եթէ յանցաւոր կամ անհնազանդ գտնուի մէջերնին, վրան դրամական տուգանք կը դնէ, որ արկղապետին կամ գանձապահին կը յանձնուի, որպէս զի եթէ ընկերաց միջէն կարօտութեան մէջ ընկող մը գտնուի, պատշաճ օգնութիւնն ըլլայ. այսպէս նաև հասարակաց հանդիսից համար եղած ծախք՝ այդ պահեստի արկղէն կը մատակարարուին։ Շատ սիրողք են այսպիսի ոտնից և հանդիսից։

Ընկերութիւնք միշտ բաց են անոնց համար որ կ'ուզեն մտնել, պայմանաւ որ պիտի հըպատակին սահմանեալ կանոնաց. բայց որպէս զի աշակերտը կարող ըլլայ վարպետութեան աստիճանին բարձրանալ, պէտք է որ քանի մը փորձերէ անցնի և արուեստին մէջ գլուխ գործոյ մը ներկայացրնէ։ Ժամանակաւ շատ աւելի դժուարին էր այդ աստիճանին հասնիլը։ Քանի մը ճարտարութեանց մէջ, ինչպէս արծաթի վրայ բանուածքի, կապերտի շինութեան, տախտակամած յարկի, պղնձի և ոսկեդիպակ գործուածոց մէջ, Ֆիֆիխու ձեռագէտք իրաւամբք համբաւաւոր եղած են. բայց ասոնցմէ զատ, ընդհանրապէս ուրիշ ճարտարութեանց մէջ յետամնաց կը համարուին. այնպէս որ ամենադիւրին է ասիական արտադրութիւնքը եւրոպականներէն որոշելը։ Սակայն զայս ալ պէտք չէ լռել, թէ արուեստից մէջ յառաջադիմելու համար քիչ միջոց ունին։

Ֆիֆիխու առանձնայատկութիւններէն մէկն ալ համբաներուն մէջ հասարակ ժողովրդեան աղաղակն ու չառաչն է. չէ լսկ կիրակի օրեր, յորս գինետուն լեցուն են, այլ նաև շաբթուն միւս օրերը՝ չափէ դուրս գինըմպութեան տալով ինքզինքին, և յարբեցութեան փնտռելով իրենց հաճոյքը։

Բմպելիքէ զատ, սիրող է ժողովուրդը նաև ըմբշամարտից, երաժշտութեան ու կապոյ կամ դրամով շրջագայութեան։ Հասարակ ժողովուրդն է առաւելապէս ըմբշութեան հաւատէտ. իրարու վրայ կ'ընկնին ու կը պլլուին՝ ինչպէս հինգ սովոր էին ընել. և մրցողք մեծ պատիւ ունին, և կուռոյ յաղթութեան անտուգութեանց մէջ՝ իրենց կուսակիցք ու քաջալերիչքն, որովհետև հասարակաց տեղուանք ու ամենուն աչքին առջև, և դրամական մուտք վճարելով կը կատարուին։ Եւ ից նկատմամբ այլ ծանր գրաւադրութիւնք կ'ըլլան....

Սիրողք են երգոց և պարուց։ Ազգային կը չուած պարեր են, որոց կը մասնակցին արք և կանայք, և աւելի համբաւելն շնորհագեղ յեսկիլիգա կոչուածն է։ Երգիչք ընդհանրապէս կոյրերն են, ապողք, և երբեմն նշանաւոր ժողովրդական քերթողք...

Հաճոյից աէրը տարակոյս չկայ որ ժողովրդեան մը բարոյականութիւնը բարձրացընելու յատուկ չէ, և բարոյականութիւնը խիստ անկեալ վիճակի մէջ կրնայ համարուիլ, չէ միայն խառնաղանձին, այլ և բարձր դասակարգին համար։ Պատուաւոր բացառութիւններ պակաս չեն. բայց այնպիսի բացառութիւնք՝ որ ինչպէս յայլս, հոս ալ կանոնը կը հաստատեն... ամենայն ոք կը գանգատի, վասն զի ամենքն կը կրեն հաւասարապէս։

Ժողովուրդն կրօնասէր է իր գիտցած և հասկըցած ոճովը, կարծելով զԱստուած և զանձն միանգամայն գոհացընելու ճամբան գտած ըլլալ։...

Վաճառականներէ դուրս գտնուած բազմաթիւ կրպակաց մէջ առուտուրը ամենահանդարտ կերպով կը կատարուի. վաճառողին և յաճախորդին մէջ միջնորդ դնելու առվորութիւնը չկայ ընդհանրապէս. բայց վէճք և տարաձայնութիւնք պակաս չեն, գինեղուն վրայ խստիւ կը պնդեն, ամէն տեսակ բողոք, վատահութիւն և թախանձանք՝ իրենց պաշտպանելու համար, ընդհանրապէս առանց ամենեւին ճշմարտութեան։ Քիչ են այն կրպակներն՝ ուսկից կարելի ըլլայ բան մը գնել ա-

digitised by A.R.A.R.@

ռանց սակարկութեան կամ արժէքէն աւելի գին պահանջելու. և այս կրպակներն գրեթէ բացարձակապէս անոնց կը վերաբերին որ երկրին մարդիկը չեն։

(Տեղեկագրին հեղինակը կը խօսի երկարօրէն՝ երկրին բնակչաց և մանաւանդ իգական սեռին սովորութեանց, զգեստուց և արդուզարդին վրայ, որ յայլուստ ծանօթք են, և զորս աւելորդ սեպեցինք թարգմանել)։

Այսպիսիք են համառօտիւ ունեցած տպաւորութիւններս յերկարատեւ բնակութեանս ի Տփխիս, և կը ներկայացընեմ առանց ուզելու կերպով մը ստանձնել մարգարէի մը պաշտօնը, որ կարծէ գուշակել ինչ որ Կովկասեան ժողովրդոց ապագայն դեռ եւս անծանօթ կը պահէ։ Անդրկովկասի գլխաւոր քաղաքին մէջ հաղորդակցութիւն մը կը նկատենք ընդ Եւրոպա և ընդ Ասիա. մեղմով ու կամաց կամաց կը կազմուի և կը ձեւանայ հոն՝ ամէն անհաւասար և այլազգի տարերց համընթացութեամբ նոր քաղաքականութիւն մը, որ ի հարկէ տարբեր պիտի ըլլայ յոյն, հռովմէական և գերմանական աշխարհաց մրցմանէ յառաջագայած քաղաքակրթութեան, որովհետեւ տարբեր են զայն կազմող տարրը։ Հոս ոչ սլաւեան աշխարհն է՝ իր բիւզանդեան աւանդութեամբ. ռուսական երիտասարդ պետութիւնն՝ որ կը ձուլուի ամենահին ժողովրդոց գաղափարներով, հետապնդութեամբ և աւանդութեամբք. որք թէպէտ խուժադուժք չեն, այլ իրենց մտաւորական մըշակութիւնն՝ կը կորսուի ժամանակաց մութ գիշերոյ մէջ, և ծագումին և լեզուին՝ դեռ եւս ճանելուկ մը կրնան համարուիլ պատմըչին համար։ Հին ժողովուրդներ են նոքա՝ որ արդէն ծալքերնին առած, ուրիշ ազդեցութիւններ ընդունելու դժուարահաճք ըլլան, բայց լըջութեամբ կը հպատակին գոյութեան նոր պայմաններուն՝ որ յաղթականներէն վրանին դրուած են։ Արդեօք պիտի ըլլա՞յ այնպիսի քաղաքականութիւն մը որ աւելի զարգացում շնորհէ և առոյգ բարեբաստիկ կեանք մը ինչ որ կը վայելենք արդէն արեւմտեան Եւրոպիոյ մէջ, և սկսած աննըման փայլմամբ լոյսը տարածել մինչև ցայժմ մթին և անմխիթար մնացած կողմերը։ Ո՞վ կրնայ առոյգ բան մ՚ըսել այս նկատմամբ։ Միայն կրնանք հաստատել առանց կարծելու թէ շատ կը խաբուինք, որ այնպիսի քաղաքակրթութեան մը յեղաշրջութեանն համար՝ որ ստուգապէս յարմար և օգտակար ըլլայ մարդկային ազգի բարեբաստութեան, հարկաւոր է երկրին ամէն ժողովրդոց լուսաւոր համընթացութիւնը։ Որչափ աւելի բազմաթիւ ըլլան ժողովուրդք և գործունեայ ջանք ցուցընեն ի պատրաստութիւն քաղաքակիրթ հիմնարկութեանց՝ խորհրդակցելով իրենց գաղափարաց, բնաւորութեանց բերման և յարմարութեանց, այնչափ աւելի կ՚ըլլայ հասարակաց այս ջանից արգասիք, հեռացընելով ինչ որ վնասակար է յայտնի քաղաքակրթութեան եւրոպական ժողովրդոց, և զարգացընելով ու աճեցընելով բարւոյն սերմերը։

Ռուսիոյ պետութեան կոչումն և գործն է Կովկասեան զանազան ժողովրդոց նմանակերպութիւն, ինչ որ այնչափ յաջողութեամբ ըրաւ հինն Հռովմ տիրած երկիրներուն գաւառաց մէջ. և եթէ Ռուսիա չունի նախնի Հռովմայեցւոց կազմակերպող ոգին, սակայն ունի Հռովմայ նման ազգային ոգի մը, որոյ սիրով կը բաբախեն յիսուն միլիոն մարդկային սրտեր, մի և նոյն զգացմունքով, գաղափարներով և շահիւք։ Տարակոյս չկայ որ Կովկասեան գաւառաց մէջ բնակող ամէն հին ազգեր՝ անոնք ալ ունին իրենց մտաւորական օրէնքը՝ տարբեր և յատուկ կնքով. բայց անոնցմէ յառաջ եկած կարողութիւնք՝ անազդեցիկ կ՚ըլլան, և որ ապահովութիւն մ՚է Ռուսիոյ՝ եթէ պիտի յաջողի ժամանակաւ ռուսական ժողովրդեան գաղափարաց և փափաքանաց համեմատ քաղաքակրթութիւն մը հաստատել։ Միւս կողմանէ ալ հաւանական է՝ որ իրենց թուական նուազութեամբն ալ՝ Կովկասեան քանի մը ժողովուրդք, և մանաւորաբար Հայք, սահմանուած են մեծ ազդեցութիւն մը բանեցընելու՝ տիրող ազգին բարուց վրայ։ Արդէն քաղաքական և զինուորական հոգաբարձութեան մէջ նշանաւոր դիրք մը ունին, ինչպէս նաեւ Ռուսիոյ ճարտարութեանց, վաճառականական և դրամագիտական այլեւայլ ճիւղերու մէջ։ Երկար փորձառութենէ խոքը՝ Հայն ուժով բնաւորութեան մը տէր դարձած է, և օգուտ քաղելով իրեն տրուած կրթութենէն, կրնայ այսօր հաւասարապէս ազդել և գործել յաջողութեամբ թէ՛ ռուս, և թէ վրական շրջանակի մէջ։ Ինչ ալ որ ըլլայ, Հայն է այսօր Կովկասի գլխաւոր քաղաքին և միանգամայն անոր հարստութեան տէրը. և իր յարատեւութեամբ, ճարտարագիտութեամբն և խնայողութեամբ՝ ա՛լ աւելի հրահանգուելու պէտք ունի, որպէս զի Տփխիս՝ կառավարութեան լուսամիտ օգնութեամբ և նեցուկ կենալովը՝ ըլլայ Ռուսիոյ պետութեան ամենէն գեղեցիկ և հարուստ քաղաքաց մէկը, ինչ որ մեր ալ մաղթանքն ու սրտի իղձն է։

digitised by A.R.A.R.@